

**ՀՀ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ և ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՅԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ¹**

Լևոն ԽԱՉԱՏՐՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու

Բանալի բառեր՝ պարեն, անվտանգություն, ռեսուրս, գյուղատնտեսություն,
մրցակցություն

Ներկայիս սոցիալ-տնտեսական պայմաններում պարենային անվտանգությունը ցանկացած երկրի ազգային անվտանգության ապահովման հիմնախնդիրներից մեկն է: Այս ամենը հաշվի առնելով՝ բավականին բարդ է երկրի ազգաբնակչությանը պարենի բավարար ռեսուրսներով աահովելը, ինչը հնարավոր է զարգացած գյուղատնտեսության, սննդարդյունաբերության և ներմուծման պայմաններում: Այստեղ կարևորվում է ինչպես երկրի սոցիալ-տնտեսական վիճակը, այնպես էլ տնտեսական անվտանգության ապահովումը, որը ենթադրում է բնակչության գնողունակության բավարար մակարդակի ապահովում, արդար մրցակցային դաշտի ապահովում և այլն: Նշենք, որ սննդի համապատասխան ռեսուրսներով ապահովելու նպատակով ՀՀ-ում արտադրվում է պարենային ապրանքներ և վերամշակվում սննդամթերք, միաժամանակ ներմուծվում է այնպիսի տեսականի, որի արտադրությունը ՀՀ-ում կամ բացակայում է, կամ արտադրական ռեսուրսները բավարար չեն բնակչությանը, ինչպես նաև սննդարդյունաբերությանը բավարար քանակությամբ ապահովման համար: ՀՀ-ն հիմնականում ներկրում է ցորեն, եգիպտացորեն, խոզի, հավի և տավարի միս, ինչպես նաև բուսական յուղ, շաքար ձու: Վերոնշյալ ապրանքների մասով երկրի արտադրական ներուժը շատ թույլ է, ինչը բացասաբար է ազդում նաև տնտեսական անվտանգության տեսանկյունից:

Ներկայացնենք վերջին տարիների հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները և վերլուծենք դրանք:

Համաձայն ՀՀ ԱՎԾ վիճակագրական ցուցանիշների, 2011թ. սկսած տնտեսության բոլոր ճյուղերը, բացառությամբ շինարարության ճյուղի, աճ են

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ № SCS 13YR-5B0037 գիտական թեմայի շրջանակներում:

գրանցել: Այսպես՝ ՀՀ ՀՆԱ-ի աճը կազմել է 4.7% (3,777 մլրդ դրամ), իսկ 2014թ.՝ 3.5% (4,843 մլրդ դրամ), գյուղատնտեսության ճյուղի աճը 2011թ. կազմել է 13.9% (795 մլրդ դրամ), իսկ 2014թ.՝ 7.2% (993 մլրդ դրամ), արդյունաբերության ճյուղինը համապատասխանաբար՝ 2011թ. 13.9% (998 մլրդ դրամ), 2014թ. 2.7% (1,288 մլրդ դրամ), ծառայությունները՝ 2011թ. 6.1% (865 մլրդ դրամ), 2014թ. 3.8% (111 մլրդ դրամ): Նշենք, որ սպառողական գների ինդեքսը, ինչպես նաև նվազագույն սպառողական զամբյուղի, այդ թվում պարենային զամբյուղի արժեքը տարիների ընթացքում արագ տեմպերով աճել են, որը համահունչ չէ սպառողների դրամական եկամուտներին: Այսպես՝ 2014թ. նվազագույն սպառողական զամբյուղի տարեկան արժեքը 2010թ. նկատմամբ աճել է 26.6%-ով, իսկ պարենային զամբյուղինը՝ 10.9%-ով, միևնույն ժամանակ սպառողական գների ինդեքսը նույնպես աճել է (2014թ. 103%), սակայն պետք է փաստել, որ դեռևս բարձր է գործազր-կության մակարդակը (2014թ. 17.6%), ինչպես նաև աղքատության մակար-դակը (2013թ. 32%)², ինչն էլ խոչընդոտում է բնակչության բնականոն կենսապահովմանը:

Հարկ է փաստել, որ ՀՀ տնտեսությունը բավականին խոցելի է՝ հաշվի առնելով արտագաղթի աճող տեպերը, գործազրկության բարձր մակարդակը, գնաճը և արտարժույթային փոխարժեքի վայրիվերումները բացասաբար են ազդել ապրանքների գների վրա, ինչպես նաև արտահանվող ապրանքների իրացման ծավալների վրա գումարային առումով շատ դեպքերում սպառողները կրում են ֆինանսական վնասներ և արդյունքում նվազում է պարենային ապրանքների համախառն սպառումը: Այս ամենը թողնում է բացասական ազդեցություն ՀՀ քաղաքացիների լայն շերտերի վրա տնտեսական անվտանգության առումով, քանի որ երկրում եկամուտների բևեռվածության մակարդակը բարձր է և դրա հետ մեկտեղ վերջիններս արտերկրից ստանում են ֆինանսական օգնություն արտարժույթով, և փոխանակման պարագայում նվազում է գնողունակությունը: Մեկ այլ խնդիր է նաև պարենային ապրանքների ներկրման գործընթացում առկա մենաշնորը, երբ ներկրված պարենի գները սահմանվում են առանձին ներկրողների կողմից մրցակցության և շուկայական հարաբերությունների բացակայության պայմաններում: Այս առումով շատ կարևորվում ՀՀ ԿԱ ՏՄՊՊ հանձնաժողովի դերը, քանի որ վերջինիս գործառնություններից է սպառողական շուկայում մրցակցության պայմանների ուսումնասիրության և գների վերահսկողության արդյունքում խախտումների արձանագրման դեպքում համապատասխան վարչարարության կիրառումը:

² ՀՀ ԱԿԾ պաշտոնական կայքէջ www.armstat.am

Ուսումնասիրելով 2014թ. ՀՀ սպառողների կողմից հայցվող հիմնական պարենային ապրանքների ռեսուրսների մակարդակը կարելի է փաստել, որ ինքնաբավության մակարդակը (արտադրություն/(արտադրություն + ներմուծում-արտահանում)) պարենի շատ տեսակներով դեռևս անբավարար է, մասնավորապես՝ տավարի մսի ինքնաբավության մակարդակը կազմել է 90.2%, խոզի մսինը՝ 62.3%, թռչնամսինը՝ 24.8%, կարագինը՝ 17.5%, բրինձինը՝ 0%,, մարգարինը՝ 0.1%, ցորենինը՝ 50.5%, մակարոնեղենը՝ 46.2%, շաքարավազը՝ 94.4% (շաքարավազը վերամշակվում է ներմուծված շաքարեղեգից), ալոուրինը՝ 98.6% (ալյուրը հիմնականում վերամշակվում է ներմուծված ցորենից), բացառություն են կազմում միայն ձուն՝ 97.8%, ձուկը՝ 103.1%, պանիրը՝ 102%³:

Ուսումնասիրելով ՀՀ սպառողների կողմից ամենից շատ հայցվող պարենային ապրանքների 2010-2014թթ. ներմուծման ցուցանիշները՝ կարելի է նկատել, որ հիմնականում խոշոր ծավալով ներմուծվում է ցորեն, տավարի, խոզի և հավի միսը, շաքարավազը, բուսական յուղը: Այսպես, 2014թ. ցորենի ներմուծման ծավալը նախորդ տարվա նկատմամբ կրճատվել է 3.8%-ով (332 հազ. տոննա), իսկ 2010թ. նկատմամբ կրճատվել է 3.6%-ով: Շաքարավազի ներմուծման ցուցանիշը 2014թ. նախորդ տարվա նկատմամբ աճել է 25.6%-ով (100.2 հազ. տոննա), իսկ 2010թ. նկատմամբ աճել է 2.5%-ով: Հավի մսի ներմուծման ցուցանիշը 2014թ. նախորդ տարվա նկատմամբ աճել է 0.5%-ով (32 հազ տոննա), իսկ 2010թ. համեմատ կրճատվել է 14.9%-ով: Բուսական յուղի ներմուծման ցուցանիշը 2014թ. նախորդ տարվա նկատմամբ նվազել է 0.4%-ով (23.1 հազ. տոննա), իսկ 2010թ. նկատմամբ աճել է ծավալով 18.6%-ով: Տավարի մսի ներմուծման ցուցանիշը 2014թ. նախորդ տարվա նկատմամբ աճել է 0.2%-ով (5.46 հազ տոննա), իսկ 2010թ. նկատմամբ նվազել է 17%-ով: Խոզի մսի ներմուծման ցուցանիշը 2014թ. նախորդ տարվա նկատմամբ նվազել է 10.9%-ով (7.2 հազ տոննա), իսկ 2010թ. նկատմամբ աճել է 57.2%-ով⁴:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի ՀՀ ցանքատարածությունները 2014թ. նախորդ տարվա նկատմամբ աճել են 5.8%-ով (188.69 հազ. հա), իսկ 2010թ. համեմատ աճել են 18.4%-ով, բերքատվությունը 2014թ. 2010թ. նկատմամբ աճել է 53.6%-ով (31.8 ց/հա), համախառն բերքը՝ 81%-ով (590.6 հազ. տոննա): Ընդ որում ցորենի ցանքատարածությունները 2014թ. նախորդ տարվա նկատմամբ աճել են 6.7%-ով, իսկ 2010թ. համեմատ աճել են 21.4%-ով (106.3 հազ.

³ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2014 թվականի հունվար-դեկտեմբերին, տեղեկատվական տեղեկագիր, ՀՀ ԱՎԾ, Երևան 2015:

⁴ ՀՀ մաքսային ծառայության պաշտոնական կայքէջ www.customs.am

հա), բերքատվությունը 2014թ. 2010թ. նկատմամբ աճել է 52.3%-ով (32.3 g/հա), համախառն բերքը՝ 84.3%-ով (338 հազ. տոննա): Կարտոֆիլի ցանքատարածությունները աճել են համապատասխանաբար 2.8%-ով և 11.2%-ով (31.5 հազ. հա), բերքատվությունը՝ 36.5%-ով (232 g/հա), համախառն բերքը՝ 52.1%-ով (733.2 հազ. տոննա): Բանջարանոցային մշակաբույսերի ցանքատարածությունները աճել են 12.3%-ով (26.4 հազ. հա), բերքատվությունը՝ 19.1%-ով (350.5 g/հա), համախառն բերքը՝ 35%-ով (954.6 հազ. տոննա)⁵:

Ներկայացված ցուցանիշներից կարելի է նկատել, որ վերջին տարիների ընթացքում հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի ցանքատարածությունները, բերքատվությունը և ստացված համախառն բերքի ծավալները աճել են, ինչը կարելի է գնահատել դրական, հաշվի առնելով այն, որ այս ամենը նպաստել է գյուղատնտեսական ապրանքների արտադրության ծավալների ավելացմանը և պարենային հաշվեկշռի կառուցվածքի բարելավմանը:

Պարենային անվտանգության համար կարևոր նախապայման է բավարար ռեսուրսների առկայությունը, որի ապահովողը գյուղատնտեսության ճյուղն է: Այս առումով ՀՀ-ում գյուղատնտեսության ճյուղը տարեց-տարի աճում է՝ նպաստելով համապատասխան ենթաճյուղերի, մասնավորապես՝ բուսաբուծության և անասնապահության զարգացմանը և գյուղատնտեսական ապրանքների համախառն արտադրանքի ավելացմանը: Սակայն այդ ամենի հետ մեկտեղ տվյալ ճյուղը համարվում է ռիսկային, քանի որ կախված բնակլիմայական անբարենպաստ պայմաններից տնտեսությունները կրում են կորուստներ՝ կրճատվում է բերքատվությունը, անասնակերի սակավության արդյունքում նվազում է կենդանական ծագման արտադրանքի ծավալները: Արդյունքում տուժում է ազգաբնակչությունը, ինչպես նաև սննդարդյունաբերությունը: Վերոնշյալ խնդիրների հետ մեկտեղ մեկ այլ խնդիր է նաև գյուղացիական տնտեսություններում ֆինանսական միջոցների սուղ լինելը, որը լրացնելու նպատակով ֆերմերները առևտրային բանկերից և վարկային կազմակերպություններից ստանում են վարկային միջոցներ, իսկ ցածր բերքատվության արդյունքում առաջանում են խնդիրներ կապված փոխառությունների վերադարձման հետ: Մեր կարծիքով, ֆինանսավորման գործընթացում անհրաժեշտ է պետական աջակցության ցուցաբերում, մասնավորապես՝ վարկավորման տոկոսադրույքի դրույքաչափի նվազեցում, ինչպես նաև սուբսիդավորում, միևնույն ժամանակ անհրաժեշտ է վարկային միջոցների մարման ժամանակահատվածի երկարաձգման համապատասխան մեխանիզմների կիրառում և այլն, որը կնվազեցնի փոխառումների (գյուղացիա-

⁵ Պարենային ապահովություն և աղքատություն 2015 թվական հունվար-մարտ, պաշտոնական տեղեկագիր, ՀՀ ԱՎԾ, Երևան 2015:

կան տնտեսությունն վարող ֆերմեր) մոտ սոցիալական լարվածությունը: Գյուղատնտեսության ճյուղի զարգացման համար կարևոր նախապայման է նաև գյուղատնտեսական կոոպերատիվների առկայությունը և դրանց զարգացումը: Այսօր ՀՀ-ում առկա գյուղատնտեսական կոոպերատիվների թվաքանակը բավականին քիչ է, ինչը պայմանավորված է, նախևառաջ, հասարակության կրթվածության ցածր մակարդակով, քանի որ կոոպերատիվների ինստիտուտի կարևորությունը գյուղատնտեսության զարգացման համար գաղափարախոսությունը լավ չի ընկալվում ֆերմերների կողմից: Այստեղ հարկ է նշել, որ հենց գյուղական համայնքների գյուղացիական տնտեսությունների համախմբմամբ է ձևավորվում կոոպերացիան, որը հետագայում զարգանում է, նպաստելով ինչպես պարենային անվտանգության մակարդակի, այնպես էլ հասարակության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը: Հարկ է նշել, որ այս ինստիտուտը դեռևս չի կայացել և զարգացման պարագայում կարող է լուծվել ինչպես սոցիալական, այնպես էլ տնտեսական հիմնախնդիրներ: Այս առումով շատ կարևոր է հասարակության իրազեկման և կրթական միջոցառումների իրականացումը պետական մակարդակով ինչպես տնտեսավարման, այնպես էլ շուկայավարման նոր մեխանիզմների ներդրման և կիրառման մասով: Նպատակահարմար է գյուղացիական տնտեսություններին և ֆերմերներին սովորեցնել այն գաղափարախոսությունը, որ գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացումը լինում է արդյունավետ, երբ առկա է նաև կոոպերացման դիվերսիֆիկացիա և խոշորացում, ինչը իրենից ներկայացնում է միջճյուղային համագործակցություն, որը հետագայում միտված է լուծել այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են.

- ապրանքայնության մակարդակի բարձրացումը և գյուղատնտեսական ապրանքների իրացման հիմնախնդիրների լուծումը արտադրող-սպառող շղթային ուղղակի կապով,
- հիմնական և շրջանառու միջոցների ձեռք բերման նպատակով ֆինանսական կառույցներից վարկային միջոցների ստացման հնարավորությունների ստեղծում,
- վարկային միջոցների ձեռքբերման նպատակով ֆինանսական հաստատություններում կոոպերատիվի գույքի գրավադրման, ինչպես նաև անդամների անշարժ և շարժական գույքի գրավադրման միջոցով, ինչպես նաև լիզինգային գործառնությունների իրականացման հնարավորությունները:

Գյուղացիական տնտեսությունների և գյուղական համայնքների զարգացումը կոոպերատիվների միջոցով նպատակահարմար է տարանջատել ճյուղային մասնագիտացումը, որը հետագայում կարելի է ընդլայնել միջճյուղայինով:

Կատարված վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ՀՀ պարենային անվտանգությունը դեռևս գտնվում է ոչ բավարար մակարդակի վրա, ինչպես նաև ՀՀ առևտրային հաշվեկշիռը պարենի մասով բացասական է, որը առաջացնում է նաև տնտեսական անվտանգության խնդիրներ: Մասնավորապես դեռևս լուծված չէ ցորենի, եգիպտացորենի, տավարի, խոզի և հավի մսի, կենդանական յուղի, բուսայուղի և ձվի համապատասխան ռեսուրսների ապահովումը հայրենական արտադրության հաշվին: Չնայած այն հանգամանքին, որ դեռևս ՀՀ-ն պարենի մասով դեռևս ունի ներմուծման կախվածություն, սակայն վերջին տարիներին նկատվում է պարենային ապրանքների արտադրության ծավալների աճ, ի շնորհիվ գյուղատնտեսության ճյուղի զարգացման, մասնավորապես՝ մշակաբույսերի և բազմամյա տնկարկների ցանքատարածությունների ընդլայնման, անասնազխաքանակի աճի շնորհիվ: Հաշվի առնելով վերոգրյալը՝ մեր կարծիքով անհրաժեշտ է գյուղատնտեսության կայուն զարգացումը ապահովել ցանքատարածությունների ընդլայնման, մշակաբույսերի բարձր բերքատվություն ապահովող սերմերի ներդրման շնորհիվ և այլն: Միաժամանակ անհրաժեշտ է ավելացնել անասնազխաքանակը նոր ցեղերի կենդանիների ներմուծման և բազմացման, ինչպես նաև առկա ցեղերի հետ տրամախաչման միջոցով: Հաշվի առնելով ՀՀ-ի ԵՏՄ անդամակցումը, կարծում ենք, որ ստեղծվելու են լրացուցիչ հնարավորություններ հատկապես պարենային ապրանքների արտահանման ծավալների ավելացման մասով, ինչպես նաև հումքի և վերամշակված սննդամթերքի ներմուծման մասով: Սննդամթերքի անվտանգության ապահովման համար անհրաժեշտ ենք համարում ԵՏՄ միասնական ստանդարտների կիրառումը, որը կնպաստի ինչպես արտահանման հնարավորությունների ընդլայնմանը, այնպես էլ բարձր որակի ապահովմանը: Այս ամենի հետ մեկտեղ նաև անհրաժեշտ է հայրենական արտադրության զարգացման ապահովում մասնավոր հատվածի, ինչպես նաև պետական միջամտությամբ: Տվյալ հիմնախնդիրը լուծելու համար անհրաժեշտ է նաև ապահովել տնտեսական անվտանգությունը. մասնավորապես պարենային ապրանքների շուկայի վերահսկողության իրականացում և չարաշահումների դեպքում վարչարարության կիրառում: Այս ամենը միտված է բարելավել պարենային և տնտեսական անվտանգության մակարդակը, ինչպես նաև լուծել սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներ:

Լևոն ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՀ Պարենային անվտանգության ներկա վիճակը և զարգացման հեռանկարները

Բանալի բառեր՝ պարեն, անվտանգություն, ռեսուրս, գյուղատնտեսություն, մրցակցություն

Պարենային անվտանգությունը համարվում է ազգային անվտանգության ապահովման հիմնախնդիրներից մեկը, որը ազգաբնակչությանը կենսաապահովող միջոցն է գյուղատնտեսության, սննդարդյունաբերության և պարենի ներմուծման միջոցով: Հոդվածը նվիրված է ՀՀ պարենային անվտանգության հիմնախնդիրների բացահայտմանը և դրանց լուծման հնարավոր ուղիների ներկայացմանը:

Левон ХАЧАТРЯН

Текущее состояние продовольственной безопасности РА и перспективы развития

Ключевые слова: продовольствие, безопасность, ресурс, сельское хозяйство, конкуренция

Продовольственная безопасность считается одним из основных вопросов национальной безопасности, которое обеспечивает население пищей с помощью сельского хозяйства, пищевой промышленности и импорта. Статья посвящена на изучению проблем продовольственной безопасности в Армении и представлению возможных путей их решения.

Levon KHACHATRYAN

Current stage of food security and perspectives for development in Armenia

Key words: food, security, resource, agriculture, competition

Food security is considered to be one of the main issues of national security, it provides the population with food by means of agriculture, food production and food import. Article is devoted on studying of problems of food security in Armenia and representation possible ways of problem solving.